ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մարտի 2026 թվականի N 367

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հրազդանի համայնքապետարանի կարիքների համար կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/64» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում նվազագույն գին առաջարկած «Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջներին, մասնավորապես՝ (Հավելված 1.1) 11-րդ չափաբաժնի ամբողջական նկարագիրը չի համապատասխանել հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին: Ուստի առաջնորդվելով Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (N 1 հավելված, այսուհետ՝ «Կարգ») 41-րդ կետով և «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/64» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11-րդ կետով՝ մասնակցին առաջարկվել է ծանուցման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից շտկում չկատարելու հիմքով հայտը գնահատվել է անբավարար և մերժվել: Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն մասնակցի կողմից սահմանված ժամկետում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելը կամ ամբողջական չշտկելը հանդիսանում է գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Այսպիսով, «Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ-ն թույլ է տվել գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, ինչը հիմք է համաձայն «Գնումների մասին» օրենքի վերջինիս գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունները հրապարակված են gnumner.am և կցված են eauction.armeps.am հարթակներում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն
ծածկագիրը	չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	համարը	անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ԿՄՀՔ – ԷԱՃԱՊՁԲ – 25/64	1	Գրասեղան մեծ	130 000	«Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ	04437663	ՀՀ, Արմավիրի մարզ., Համերաշխության Փ/Տ/29 Դաշտ 1127	02.12.2025	Հրազդանի Համայնքապետարան	«ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/64» ծածկագրով հրավերի 8.11 կետ և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետ	Առկա չէ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

11 մարտի 2026թ.
ք.Հրազդան